ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԵՐԵՔ ԴԱՐԶԻՄ

Ինչպէս յայտնի է Փրկչի համբառնալուց յետ տասն և երկու առաքեալներն իրանց վարդապետի պատուէրի համեմատ ամեն տեղ տարածում են իրանց դաւանած սուրբ և ճշմարիտ վարդապետութիւնը։ Թէև տասն և երկու առաքեալների քարոզութեանց մասին ճիշտ և դրական տեղեկութիւն չունինք, բայց նոցա գործունէութեան հետևանքին նայելով կարող ենք ասել դրականապէս, որ Ն. Կտակարանի նահապետներից ամեն մինը մի մի լուսաւոր կեդրոն էր, որտեղից ճշմարտութեան ճառագայթներն ամենուրեք տարածւում էին։

Աւետարանի քարոզութիւնն առաքելական դարում այնպէս արագ և հասաատուն քայլ էր անում, որ երկրորդ դարու վերջը հիւսիսային Ափրիկէի եկեղեցու հայրերից Տերտուղիանոս հռոմէական կայսրութեան կառավարիչներին իրաւունք ունէր հետևեալն ասելու. «Մենք շատ ժամանակ չէ աշխարհիս վերայ երևացել ենք, բայց կարողացանք ամեն տեղ լեցնել՝ ձեր քաղաքները, կղզիները, բերդերը, հասարակութիւնները, ժողովները, մինչև անգամ բանակները, պալատը, ծերակոյտը և այլն. և ձեզ թողեցինք միայն ձեր տաճարը»։ Միևնոյն մատենագիրը մի այլ տեղ ասում է. «Աւետարանը թնդաց ամեն տեղ, Պարսկաստանում, Մարաստանում, Միջագետքում, Հայաստանում, Փռիւգիայում, Կապադովկիայում, Պոնդոսում, Ասիայում, Պամփիւլիքայում, Եգիպտոսում, Ափրիկէում, Իտալիայում, Գալլիայում, Բրիտանիայում, Սպանիայում և այլ ուրիշ տեղեր . . . . Յիսուսի Քրիստոսի թագաւորութիւնը տիեզերական է. Քրիստոս թագաւորում է բոլոր ազգերի վերայ»։

Արդեօք ի՞նչ փիլիսոփայական պատճառ կայ այդպիսի ամենամեծ եղելութեան։ Ի՞նչ բանի պիտի վերագրել այդչափ մեծ յառաջադիմութիւնը։

Այս հարցման զանազան փիլիսոփայական դպրոցներ զանազան պատասխաններ տուին. այդ բոլորի էութիւնը նրանումն է որ հեթանոսական աշխարհը ձանձրացել էր կռապաշտութեամբ և հասարակութեան հոգեկան պահանջներին բաւականութիւն չէր տալիս։

Սակայն, աչքի առջև ունենալով այն հանգամանքը, թէ ինչպէս հեթանոսութիւնն առաջին երեք դարում հակառակեցաւ քրիստոնէութեան ազդեցութեան և տարածման, և ոչ մի մարմնական և մտաւոր միջոց աչքից բաց չէր թողնում՝ քրիստոնէական կրօնը բնաջինջ անելու համար, կարող ենք ասել, որ հեթանոսութիւնը դեռ ևս իր ազդեցութիւնը հասարակութեան մէջ պահպանում էր։ Հեթանոս ժողովուրդը հեթանոսական կրօնին համակրում էր, քանի որ նորա կրքերն ու տգիտութիւնը համեմատ էին հեթանոսական սնապաշտութեանց։ Լուսաւորեալ դասերը չէին հաւատում իրանց աստուածների մասին վարդապետութեան, սակայն իրանց շահասիրութիւնն ու իշխանասիրութիւնը պահանջում էր, որ նոքա կեղծօրէն հետևէին ժողովրդի դաւանածին, նա մանաւանդ, որ իրանք ևս անկարող էին մի նոր ճշմարիտ կրօն ստեղծելու։

Ինչպէս քրիստոնէական կրօնի էութիւնից երևում է, դա մի այնպիսի կրօն է, որի հիմունքներն աշխարհի մէջ ծածկուած էին նոյն իսկ արարչագործութիւնից սկսած։ Առաջին երեք դարու եկեղեցու հայրերը, գլխաւորապէս Թէոփիլոս Անտիոքացի, Յուստինիանոս, Տերտուղիանոս, Օրիգինէս և Կղեմէս Աղէքսանդրացին աշխատում էին կռապաշտների ուշադրութիւնը դարձնել այն բանի վրայ, որ նոցա կրօնի մէջ ևս մնացել էին աստուածային յայտնութեան մի քանի ճշմարիտ սկզբունքներ, որոնք ամենայն մաքրութեամբ պահուած են Մովսիսական օրէնքի և Քրիստոնէութեան մէջ։ Սակայն այդ սկզբնական ճշմարտութիւններն այնքան խաւարել էին սուտ կրօնների մէջ. մանաւանդ յունական—հռոմէական բազմաստուածութեան մէջ, որ քրիստոնէութիւնը բոլոր ազգերին բոլորովին մի նոր կրօն երևեցաւ՝ ոչ թէ միայն նրա համար, որ Յիսուս Քրիստոս նահապետներին և Մովսեսին տրուած յայտնութիւնները լրացրեց, այլ առաւելապէս նրա համար, որ հեթանոսական ծէսերի մէջ մասամբ իւէք պահուած վարդապետութիւնն այնքան մթնացած էր զանազան սնոտիապաշտութիւններով և մոլորութիւններով՝ որ ժողովուրդը չէր կարողանում հասկանալ։

Յիսուս Քրիստոս իր վարդապետութիւնը բոլորովին մի նոր բան չներկայացրեց, այլ ընդհակառակն, նա ինքն ասում էր, «ոչ անցցէ յօրինաց և ի մարգարէից յովտ մի, որ նշանախեց մի է, մինչև այս ամենայն եղիցի»։ Իսկ Պօղոս առաքեալն առ եբրայեցիս գրած թղթի սկզբում բացատրելով առաջուայ յայտնութիւնների զանազան տեսակները՝ ասում է. «բազում մասամբք և բազում օրինակօք կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս

մեր մարգարէիւք։ Ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ Որդւովն, զոր եդ ժառանգ ամենայնի։ որով և զյաւիտեանս արար։։

Որդին Աստուծոյ ոչ թէ միայն ամբողջ մարդկութեան կեդրոնն էր։ որ պիտի փրկուէր Նրանով։ այլ և մինչև անգամ բոլոր աստուածային յայտնութիւնների կեդրոնն է։ հետևաբար քրիստոնէութիւնը նման է լերան վերայի փարոսին։ նա պիտի ամբողջ մարդկային սերունդը լուսաւորէ մինչև աշխարհի վերջը։

Յիսուս Քրիստոսին բնաւ չէ կարելի նախորդ և յետնորդ սերնդից բաժանել։ նա է աշխարհի աստուածային կեդրոն։ նախորդ սերունդը մեռնում էր ակնկալելով Նրա գալստեան։ իսկ յետնորդը կարող է ապրել միայն հաւատով առ Նա։ Յիսուսի Քրիստոսի վարդապետած ճշմարտութիւնը՝ ոչ թէ մարդկան սկզբունքներից և կամ մարդկութեան որ և է փիլիսոփայութիւնից էր առնուած։ այլ Հօր Աստուծոյ ծոցից։ որ ամեն գոյութեանց սկիզբն է։ և ամեն ճշմարտութեան աղբիւր։ Փրկիչը մեզ չէ ներկայանում իբրև մի փիլիսոփայ։ որ մարդկան մտքի ուժերի աստիճանաբար զարգացումը համակերպում է. նա չմերժեց սկզբնական յայտնութիւնները։ որոնց լրացնելու Ինքն էր եկել. և որովհետև Ինքն Աստուծուց էր։ հետևաբար Նրա քարոզած ճշմարտութիւնն ևս պիտի լինէր աստուածային և անսխալ։

Սկզբնական յայտնութիւն դրուած էր նահապետներին։ և այս յայտնութիւնն Աստուծու թելադրութեամբ Մովսէսի և մարգարէների ձեռքով հետզհետէ զարգանում է։ Յիսուս Քրիստոս Յայտնութեան մէջ չփոխեց այն։ ինչ որ էապէս ճշմարիտ էր։ այլ նա աւելի լրացրեց և կատարելագործեց և այդպիսով աշխարհին տալիս է մի այնպիսի կրօն, որ համապատասխանում է մարդկութեան ամեն տեսակ յառաջադիմութեանց։

Երբոր Փրկիչն աշխարհ եկաւ։ յայտնութեան մի քանի յիշողութիւններ դեռ ևս ամեն տեղ պահպանուած էին։ Այս մի անհերքելի փաստ է. և առաջին դարերի հայրերը շատ գեղեցիկ կերպով դրանից օգուտ էին քաղում քրիստոնէութիւնը պաշտպանելու համար։ սակայն այս ծածկեալ ճշմարտութիւնն այնքան խաւարած էր։ որ քրիստոնէութիւնն ամենայն պարզութեամբ բացատրելով և խաւարից հանելով։ հարկաւ աշխարհին մի նոր վարդապետութիւն քարոզեց։ Այս մոռացեալ ճրմարտութեանց հետ կից ընթանում էին այնպիսի մոլորութիւններ և սնապաշտութիւններ։ որ ժողովուրդը բարոյապէս և կրօնապէս բոլորովին ապականեցաւ։ այնպէս որ քրիստոնէութիւնը պէտք է որ մի նոր աշխարհ կազմակերպէր։

Փիլիսոփաներից ոմանք մտածելով որ ընդհանուր ճշմարտութիւններ՝ թէև աղաւաղուած՝ պահպանուել էին բոլոր ազգերի յիշողութեան մէջ։ այն եզրակացութեան եկան։ որպէս թէ քրիստոնէութիւնը նախորդ ճշմարտութիւնների կանոնաւոր և ուղիղ եզրակացութիւն է։ և թէ Յիսուս

Քրիստոս այդ առել է զանազան փիլիսոփայական դպրոցներից։ Սակայն բարեխղճաբար ուսումնասիրելով հին աշխարհի կրոնները, անհնարին է այդպիսի եզրակացութեան գալ։

Նահապետներին և Մովսէսին տրուած յայտնութիւնները այն բոլոր վարդապետութիւնների աղբիւրներն են, որոնց հետքերը նկատւում են բոլոր ազգերի կրոնների մէջ։ Իսկ քրիստոնէութիւնը աստուածային զարգացումն էր և սկզբնական յայտնութեանց կատարելագործութիւն։

Ի հարկէ քրիստոնէութիւնը կարող էր յանկարծակի աշխարհ երևալ առանց մի որ և է յարաբերութիւն ունենալու նախորդ կրօնի վարդապետութեանց հետ, սակայն աստուածային նախախնամութեան երբէք հաճելի չէր թողնել աշխարհը առանց գերբնական ճշմարտութիւնների, որոնք կարևոր էին նրա հասկացողութեան զարգացման, և նրա խիղճը չարի դէմ մաքառման մէջ հաստատ պահելու համար։ Աստուած շատ անգամ խօսել է մարդկութեան հետ, և սկզբնական յայտնութիւններն ունին աստուածային բնաւորութիւն ոչ թէ միայն նրա համար, որ քրիստոնէական յայտնութեանց հետ կապ ունին, այլ նրա համար, որ դոքա Աստուծու նախասահմանութեան նախագծի մէջ են մտնում։ Իսկ նոքա, որոնք որ աշխատում են ցոյց տալ, թէ քրիստոնէութիւնը փիլիսոփայական գաղափարների ձուլումն է, ամենից առաջ պիտի փորձէին բացատրել հին աշխարհի հաւատոյ վարդապետութեան սկիզբը, որի հետքերն ամեն տեղ երևում են, իսկ դոցա սկիզբը չէր կարող լինել ոչ արտաքին բնութիւն և ոչ էլ մարդկային բանականութիւն։ Մոռանում են նաև, որ յայտնութեան պատմութիւնը պարզ է և դրական։

Աւելի լաւ և խելացի կլինի քրիստոնէութիւնը բացատրելիս ուղղակի դիմել սկզբնական յայտնութիւններին, քան թէ փիլիսոփայական դպրոցների տեսութիւններին, որոնք նոյն իսկ փիլիսոփաներին պարզ չեն։

Այն հանգամանքները, որոնց մէջ քրիստոնէութիւնն աշխարհ եկաւ, դարձեալ նրա աստուածութեան ապացոյցներ կարող են լինել։

Յիսուս և Նրա առաքեալներն ինչպիսի՞ հասարակութեան էին դիմում։ այնպիսի սկեպտիկական հասարակութեան, որ ճշմարտութիւնը խառնում էր մոլորութեանց հետ և այնպիսի վարդապետութիւն էին դաւանում, որ ոչ մի բաւարարութիւն չէր տալիս բանականութեան, այնպիսի բարոյապէս ապականեալ հասարակութեան էին դիմում, որի մէջ բարու և չարի տարբերութեան մասին հասկացողութիւն հաղիւ թէ պահպանուած էր,—այնպիսի հասարակութեան, որի խղճմտանքը բարոյապէս և կրօնապէս մեռած էր։

Ինչպիսի՞ վարդապետութիւն էին քարոզում նոքա այդպիսի հասարակութեան մէջ։ Այնպիսի սուրբ և վսեմ վարդապետութիւն, որ աշխարհը մինչ ցայժմ չէ կարողանում լիովին իրականացնել։ այնուամենայնիւ առաքեալ-

ները հարկադրեցին աշխարհին ընդունել այդ վարդապետութիւնը։ Ի՞նչ կերպով—քարոզութեամբ։ Արդեօք կայ մի որ և է յարաբերութիւն միջոցի և նրա հետևանքի մէջ։ Այո՛, եթէ քարոզութեան հետ միացնենք այն հրաշքները, որոնք ցոյց էին տալիս, թէ այդ գործն աստուածային է։ Ո՛չ, եթէ որ հրաշքները մերժենք։

Բազմաստուածութեան հետևողներին ոչ մի բան չէր գրաւում դէպի քրիստոնէութիւն. նոցա դաւանած կրօնի և Աւետարանի մէջ մի խիստ հակադրութիւն կար։ Հեթանոս հասարակութիւնն ապականուած էր, իսկ Աւետարանն ամբողջապէս սրբութիւն է. այդ հասարակութիւնն էր սկեպտիկական և անհաւատ, իսկ Աւետարանը հիմնուած է ուղիղ հաւատի և ճշմարտութեան վերայ։

Փիլիսոփայն քրիստոնէութեան աւելի թշնամաբար էր վերաբերում։ Նա քրիստոնէութիւնը ծաղր ու ծանակի էր ենթարկում և հալածանքներ էր յարուցանում։

Քաղաքական և հասարակական դրութեանց (системъ) հիմունքներն էին—կայսրների, անսահման իշխանների, և քրմապետների բռնութիւնը, հարուստ դասակարգերի առանձնաշնորհութիւնները, տիրոջ և ստրկի մէջ եղած անչափ տարբերութիւնը, և դրամի տիրապետող ոյժը։ Իսկ ընդհակառակն Աւետարանի էութիւնն է, բաբեխղճաբար հնազանդութիւն՝ օրինական իշխանութեան, եղբայրութիւն և հաւասարութիւն ամեն տեսակ դասակարգերի նկատմամբ, մշտական ձգտումն նիւթական կեանքից հեռանալու և Աստուծուն մերձենալու։

Այդպիսի վարդապետութեամբ աշխարհի մէջ երևեցան առաքեալներն ու նոցա հետևողները, որոնք գործում էին միմիայն ներքին միջոցներով, դիմելով բանականութեան և խղճմտանքին, և բնաւ քաղաքական կազմակերպութեան դէմ չգրգռելով ժողովուրդին։ Նոքա չէին մտածում հասարակական վարչութեան ձևերի մասին. նոցա միակ նպատակն էր անձնաւորութիւններ կատարելագործել և այդպիսով մտցնել ամբողջ հասարակութեան մէջ ճշմարտութեան ու սիրոյ զգացմունքները։

Ստրկութիւնն աշխարհի ժանդախտ էր, որ հակառակ էր Աւետարանի ոգուն, բայց առաքեալները ստրկութեան դէմ ոչ մի օրէնք չգրին։ Այլ նոքա ստրկին քարոզում էին, որ նա Աստուծու առջև իր տիրոջից բարձր է, եթէ որ նրա առաքինութիւնները շատ են։ Նոքա տէրերին խրատում էին, որ ստրուկը նրա եղբայրն է, և գուցէ Աստուծու առջև աւելի գին ունի։ Նոքա հարստութեան ընդդէմ չէին քարոզում, այլ ուսուցանում էին թէ դրամներն օգտակար են, եթէ որ դոցանով բարեգործութիւն են անում և կարօտեալներին օգնում։ և թէ դրամը մի տեսակ միջոց է աշխատասիրութիւն պահպանելու և զարգացնելու համար։ Նոքա մի որ և է օրէնք կամ կանոն չսահմանեցին նոցա դէմ, որոնք իրենց հարստութիւնն ի չարն էին

գործ դնում և իրանց կեանքը դատարկութեամբ անցնում։ այլ նոքա աշխատասիրութեան մասին մի ընդհանուր կանոն դրին, որից ոչ մինը շեղուելու իրաւունք չունէր։ Աւետարանական վարդապետութիւնը հոգիների մէջ սերմանուելով, այնքան առատ պտուղներ բերեց, որ չնայելով առաջին երեք դարերի սաստիկ հալածանքներին և կռիւներին, առաջին քրիստոնեայ կայսեր գահը բարձրանալուն պէս, հեթանոսական օրէնքները արդէն դադարեցին հասարակութեան պահանջներին բաւականութիւն տալուց։

Մենք այն մասին չենք վիճում, որ այդ ժամանակից եկեղեցու արտաքին վիճակը լաւացաւ, բայց նոյա սաստիկ սխալւում են, որոնք կարծում են, որպէս թէ Մեծն Կոստանդիանոսի քրիստոնեայ դառնալուց առաջ քրիստոնէութիւնը չէր թափանցել հասարակութեան զանազան դասերի մէջ։ Եկեղեցին այնպիսի մի զօրեղ հաստատութիւն էր դարձել, որ առաջին երեք դարում բռնաւորների գործ դրած ոչ մի միջոց չկարողացաւ նրան դրդուել։

Ոմանք կարծում էին, որ հռոմէական կայսրութեան միութիւնը շատ օգտակար էր Աւետարանի տարածման և հաստատութեան համար։ Սակայն այս միութիւնը միշտ կարծեցեալ միութիւն էր։ Թէև ամբողջ կայսրութեան համար գոյութիւն ունէր մի կեդրոնական իշխանութիւն, բայց նուաճուած ազգերը պահում էին իրանց կրօնը, սովորութիւնն ու լեզուն։ Լիբիացու և հռոմայեցու մէջ այնքան տարբերութիւն կար ինչքան որ Լիբիացու և Սկիւթացու մէջ։ Կայսրութեան մէջ միութիւն երևում էր կեդրոնական իշխանութիւնից արձակուած հրովարտակներով, որոնց կատարումը հարկադրում էր նահանգական կառավարիչներին։ Իսկ այդ հրովարտակներն աւելի վնասակար էին քան թէ օգտակար Աւետարանին, սրանից ևս պիտի եզրակացնել, որ կայսրութեան միութիւնն առաքեալների և սոցա հետևողների քարոզութեանց աւելի արգելք էր դնում քան թէ նպաստում։

Առաքեալներն իրանց քարոզութեան սկզբում դուրս եկան հռոմէական կայսրութեան սահմաններից։ Երբ հրէից առաքեալը՝ Պետրոս Փոքր Ասիոյ նահանգները պտտելով հասաւ մինչև Բաբելոն, այն ժամանակի հրէութեան գլխաւոր կեդրոնը։ Յովհաննէս Աստուածաբանը քարոզում էր հռոմայեցիների թշնամի պարթևներին։ Անդրէաս առաքեալը Դանուբից անցնելով քարոզեց Սկիւթացիներին։ Մատթէոս առաքեալը գնաց Հարէշստան և այնտեղից Հնդկաստան։

Հռոմէական կայսրութեան մեծ առաքեալն էր Պօղոս և նրա քարոզութիւնն ամենից աւելի յառաջադիմութիւն գտաւ հելլենների մէջ։ իսկ Թադէոս և Բարդուղիմէոս առաքեալները քարոզեցին Հայաստանում։ մնացած միւս առաքեալները գործում էին այնպիսի ազգերի մէջ, որոնք իրանց բնաւորութեամբ և լեզուով միմիանցից տարբերում էին։

Հռոմէական ամբողջ կայսրութեան մէջ միմեանց կից գտնուում էին երեք

տարբեր տարր—տեղական ժողովուրդ տարբեր ցեղերից կազմուած, Հելլենական տարր՝ մնացած Մեծն Աղէքսանդրից և նրա յաջորդներից, Հռոմէական տարր, որ Հռոմէական տիրապետութեան սկզբից Հռոմէական կառավարութիւն էր կազմում։ Սակայն Հռոմէական լեզուն կամ լատիներէն շատ քիչ տարածուած էր նոյն իսկ Հռոմում։ լուսաւորեալ դասերը գլխաւորապէս գործ էին ածում յունական լեզուն, բայց, բացի յունարէնից և լատիներէնից ամեն մի նահանգում գործ էին ածում հին ժողովրդական բարբառներ իրանց գրականութեամբ հանդերձ։ Ասորական—քաղդիական լեզուն և նրա զանազան բարբառները տիրապետում էին կեդրոնական Ասիայ բոլոր նահանգներում՝ սկսած Պաղեստինից մինչև Եփրատի ափերը։ Եգիպտոսի ընդհանուր բարբառն էր կոպտերէն՝ բացի Աղէքսանդրիայից, որ յունական փիլիսոփայութեան և գիտութեանց կեդրոն էր, ուր տիրապետում էր Աղէքսանդրիան կամ յունական բարբառ։ Արևմտքում լատիներէն և յունարէն խօսում էին միայն գլխաւոր քաղաքներում, իսկ ժողովուրդները գործ էին ածում իրանց հին բարբառները։

Կրօնները այնքան էին տարբերուում, որքան որ լեզուները, թէև Հռոմայեցիները յունական գրականութեան հետ ի միասին ընդունեցին և յունական բազմաստուածութիւնը, սակայն յունական—Հռոմէական կրօնական դրութիւնն Հռոմէական կայսրութեան Բաբիլոնում բնաւ փոփոխութիւն չկրեց, այնու ամենայնիւ օտար կրօններ չէր հալածում, այլ նա բոլոր աստուածներին հաւասարապէս իր Պանթէոններ ընդունում, և ինչպէս որ ազգերին նուաճում և իրեն էր հպատակեցնում, այնպէս էլ նոցա աստուածներին։

Հռոմէական կայսրութիւնը բացի զանազան մասնաւոր բաժանմունքի, բաժանուում էր գլխաւորապէս արևելեան և արևմտեան։ Առաջինը կազմում էր Եգիպտոս Լիբիայի և Հարէշստանի հետ ի միասին, Ցունաստան և ամբողջ կեդրոնական Ասիա Միջերկրական ծովից մինչև Եփրատ և Դանուբից մինչև Հնդկաստան։ Իսկ Արևմտեան մասը պարունակում էր իր մէջ Իտալիա, Սպանիա, Գալլիա, հիւսիսային Ափրիկէ, որի մայրաքաղաքը Կարթագինէն էր, և Դանուբից դէպի հիւսիս գտնուած նահանգները։

Առաջին երեք դարերի ընթացքում քրիստոնէութիւնը գլխաւորապէս տարածուեցաւ Արևելքում։ Եկեղեցին այնտեղ շատ բազմացաւ և ծաղկեցաւ։ Դա էր որ առաջին քարոզիչներին Արևմտքի յունական գաղթականութիւնները ղրկեց, գլխաւորապէս Գալլիա և Բրիտանիա։ այնտեղ հաստատուեցան ծաղկեալ քրիստոնեայ եկեղեցիներ, բայց միայն գլխաւոր քաղաքներում, որոնք իրանց բուն նշանակութիւնը ստացան միայն երրորդ դարու ընթացքում, իսկ նոյն ինքն Հռոմ շատ քիչ լոյս էր սփռում շրջակայ ազգերի վերայ, թէև այնտեղ եկեղեցին բազմաթիւ և հարուստ էր։ Կարթագինէն նրան նսեմացրեց երրորդ դարու ընթացքում։

Արդեօք ինչպէ՞ս գործեց եկեղեցին քարոզութեան մեծ գործի նկատմամբ տարբեր բնաւորութեամբ, յատկութեամբ և լեզուով ազգերի մէջ։ Պատմութիւնը մեզ այս բացատրումէ. նա քարոզումէր Աւետարան, սակայն սէր և հրաշքներ նրան իբրև միջոց ծառայումէին։ Այս արտաքին հնարների հետ պէտք է միացնել այն ներքին շնորհքը, որ տրամադրում էր սրտերը լսելու քարոզներ, հասկանալ սիրոյ լեզուն և տեսնել հրաշքների մէջ աստուածային կամքի յայտնուելը։ Աստուծու այս ներքին ներգործութիւնը միաբանութեան վերայ կարող է միայն բացատրել այն արմատական կազմակերպութիւնը, որ նրա մէջ եղաւ։

Աստուծու ներքին ներգործութիւնն առաւելապէս երևումէր նահատակների հոգիների մէջ։ Առաջին երեք դարու ընթացքում բազմաստուածութեան քրիստոնէութեան դէմ մղած պատերազմը գրեթէ հռոմէական կայսրութեան բոլոր նահանգներն արիւնով ներկեց։

Թէև կայսրներից ոմանք ներողամտութիւն էին ցոյց տալիս քրիստոնէութեան, սակայն ընդհանուր հալածանքների մասին իրանց նախորդների հրատարակած հրովարտակները չփոխեցին. մինչև անգամ նոցա թագաւորութեան ժամանակ նահանգների կառավարիչները հիմնուելով առաջուայ հրովարտակների վերայ՝ հալածումէին քրիստոնեաներին, բաւականութիւն տալով իրանց արիւնռուշտ կրքերին. Բացի սրանից, զանազան ժամանակներ կայսրներն այդ հրովարտակները նորոգումէին, որով հալածանքին մեծ ոյժ էին տալիս։

Եթէ մինչև անգամ նահատակութեան բուն գործերը չցոյց տային մեզ Աստուծու ներքին ներգործութիւնն, այն ժամանակ այդ դիւցազունների կրած խիստ չարչարանքները բաւականաչափ արդէն վկայումեն, որ նոցա մէջ մի գերմարդկային բան կար։

Մարդկութեան պատմութեան մէջ ամեն ժամանակ եղել են մարդիկ, որոնք իրանց անձը զոհել են ճշմարտութեան կամ մի որ և իցէ կարծիքի համար, որոնք նոցա համար ճշմարիտ և օգտակար էին համարում։ Մենք այդպիսի հերոսների առջև խոնարհումենք, մինչև անգամ նոցա կարծիքին մասնակից չլինելով, նոցա մենք աւելի ևս յարգումենք, նրա համար, որ այդպիսի մարդիկ հազուագիւտ են և մարդկութեան մէջ բացառութիւն են կազմում. բայց աւելի մեծ յարգանքով և պատկառանքով կխոնարհինք քրիստոնէայ նահատակների առջև. նոքա մահուան էին դիմում ինչպէս մի հանդիսի, և ամենապաստիկ պատիժների տակ ժպտում և ուրախութեամբ տանում էին ամեն հարուածներ, քան թէ հաւատափոխ լինում։

Աչքի առջև ունենալով այն հանգամանքը, որ ոչ թէ միայն երիտասարդներ, պատանիներ, այլ մինչև անգամ ծերունիներ, թուլասիրտ կանայք

և մանուկներ արհամարհանքով էին նայում դահիճների տուած հարուածների, վայրի գազանների, և ամենախիստ պատիժների վերայ, և ամեն բան համբերութեամբ և ուրախութեամբ էին տանում Քրիստոսի անուան համար։ Պէտք է խոստովանել որ բոլոր դիւցազն—փիլիսոփաները նսեմանում են քրիստոնէական արիութեան առջև և թէ մարդկութիւնը երբէք այդ աստիճանի չէր կարող բարձրանալ, եթէ որ նրան Ամենակարող Աստուած չպահպանէր և չզօրացնէր։

Առաջին երեք դարում նահատակութիւնն եկեղեցու մէջ մշտական հրաշք էր։

Պղատոն ճշմարիտ արդարի մասին մի տեսութիւն է արել։ Նա այդ արդարին նկարագրում է որպէս մի առաքինի մարդ, որ մինչ ցմահ չարի հետ մաքառում է, հալածում է նրան որպէս մի չարագործի, և մեռնում է որպէս թէ յանցաւոր։ Մեծ փիլիսոփան մինչև անգամ չէր էլ կարծում, որ իր զարմանալի տեսութիւնը մի օր այնպիսի ընդարձակ գործադրութիւն կգտնէր և թէ աշխարհի մէջ մի այնպիսի կրօն պիտի գար, որ ընդունակ պիտի լինէր հասարակութեան ամեն դասակարգերի մէջ դիւցազուններ յառաջ բերելու, Պղատոնի նկարագրած առաքինի մարդու նման։

Հիսուսելով Յիսուսի Քրիստոսի, Աստուածամարդի, Ամենարդարի մասին, որին չպէտք է մարդկութեան շարքը դնել, նահատակները ապացուցին, որ քրիստոնէութիւնը մահկանացուին բնութիւնից վեր է բարձրացնում և կարող է հաղարաւոր այնպիսի դիւցազուններ յառաջ բերել, որոնց իդեալը Պղատոնն իր տեսութեան մէջ ներկայացնելով անհնարին էր համարել դրա իրականութիւնը։

Մինչդեռ բազմաթիւ քրիստոնեաներ իրանց հաւատի համար կեանք էին զոհում, ճարտարախօս և պերճախօս մարդիկ պաշտպանում էին նոցա խօսքով, և քրիստոնէութեան վերայ բարդած ամբաստանութիւնները արիութեամբ հերքում։ Առաջին երեք դարու ընթացքում եղած ջատագովութիւնն ամենահետաքրքիր ճիւղ է կազմում եկեղեցական մատենագրութեան։ Եկեղեցին երկրորդ դարու վերջերն ու երրորդ դարում յառաջ բերեց նշանաւոր ջատագովական գրուածներ, մինչդեռ հեթանոսութիւնը ոչինչ բան յառաջ չբերեց, բացի ճարտասաններից, սոփեստներից և վատ բանաստեղծներից։ Եկեղեցին ծնեց գիտնական փիլիսոփաներին և մատենագիրներին, ինչպէս են Երանոս, Հիպպոլետ Աթանագորոս, Թէոփիլոս Անտիոքացի, Յուստինոս, Կղեմէս Աղէքսանդրացի, Օրիգինէս, Տերտուղիանոս, Լակտանտիոս և Եւսեբէոս Կեսարացի։ Կարելի է նաև շատերին յիշատակել, բայց մեր յիշած մատենագիրներն էս բաւական են մեր ասածը հաստատելու համար, ով որ դոցա գրուածների հետ կծանօթանայ առանց կանխակալ կարծիքի, նա կարող է մի համեմատութիւն կազմել քրիստոնէական

փիլիսոփայութեան և մատենագրութեան ու նոյն ժամանակի հեթանոսականի մէջ և կհամոզուի որ քրիստոնէականն անհամեմատ բարձր է հեթանոսականից։ Կղեմէս Աղէքսանդրացու, Օրիգինէսի խորին փիլիսոփայութիւնը, Տերտուղիանոսի պերճախօսութիւնը, Կիպրիանոսի և Լակտանտիոսի ոճը և Եւսեբէոս Կեսարացու գիտնականութիւնը այնքան վսեմ և նշանաւոր էին, որ մինչև անգամ քրիստոնէութեան հակառակորդներն ևս խոստովանում էին։

Ով որ առաջի երեք դարու եկեղեցու հայրերի գրուածքները կկարդայ, նա շատ հեշտութեամբ կհամոզուի, նոցա մտաւոր գերազանցութեան մէջ, և թէ պարզ այն եզրակացութեան կգայ, որ նոքա հեթանոսական գիտութիւնը և մատենագրութիւնը չեն արհամարհած, այլ ընդհակառակն նոցա մասին հետաքրքիր տեղեկութիւններ են հաղորդում, որոնց ուրիշ մատենագիրների մէջ փնտռելը իզուր կլիներ։

Մենք չենք կարողանում երբէք բացատրել այն անհեռատես սահմանափակ դպրոցի ուղղութիւնը, որ կարծում է թէ նրա համար ստորութիւն է առաջին դարերի քրիստոնէական մատենագիրներ ուսումնասիրել, որպէս թէ նոցա ուսումնասիրութիւնը զուտ փիլիսոփայական և գիտնական տեսակէտից մեզ ոչինչ հետաքրքրութիւն չէ տալիս։

Այդպիսի հակաքրիստոնէական դպրոցի սկեպտիկականութիւնը զրկում էր ամենահետաքրքիր տեղեկութիւններից և միևնոյն ժամանակ ցոյց է տալիս մտքի ճնշումն ու սահմանափակումը։ Սակայն ամենից զարմանալին այն է, որ մարդիկ կամաւ իրանց զրկում են այդ լոյսից և յամառութեամբ իրանց ներկայացնում են ընդունակ ամեն բան հասկանալու։ Ով որ յիրաւի առանց կանխակալ կարծիքի և բարեմտաբար կըմբերաբերի ամեն բանին, նա երբէք չի մերժիլ գիտնական և փիլիսոփայական ամենահնարաւոր յիշատակարաններ միայն նրա համար, որ նոքա քրիստոնէական աղբիւրներից են։ Քրիստոնէութիւնը մարդկութեան փիլիսոփայութեան մէջ շատ նշանաւոր տեղ է բռնում, մինչև անգամ մի կողմ թողնելով նրա աստուածային յատկութիւնը, խելացի մարդը չպէտք է մերժէ քրիստոնէութեան տուած այն տեղեկութիւնները, որոնք կարևոր են կրօնական, փիլիսոփայական և հասարակական խնդիրներ վճռելու։

Մենք այստեղ չենք աշխատում հեթանոսութեան նշանաւոր դարերը ստորայնել։ Աթէնք և Հռոմ այնպիսի մատենագիրներ տուին, որ մարդկութիւնն ամեն ժամանակ կարող է հիանալ, բայց այդ հիացումը մի՞թէ պիտի սահմանափակել Պերիկղէսեան և Օգոստոսեան դարով։ Մի՞թէ Պղատոնից ստոր է Օրիգինէս միայն նրա համար, որ նա նրա վսեմ մտքերը բացատրել է աւելի նուազ մաքուր հելլէնական ոճով և որը Պղատոնի փիլիսոփայութեան՝ քրիստոնէութեան դրօշմ տուաւ։ Մի՞թէ Կիպրիանոսը Կի-

կերոնից ստոր է նրա համար, որ նա լատինական բարբառը նոյն ոճով և ձևերով չէ յայտնած։ Մի՞թէ Եւսեբէոս Կեսարացին Վարրոնից պակաս գիտնական է նրա համար, որ նա քրիստոնեայ է։

Երբ որ գիտնականները կզբաղուեն քրիստոնէական գրականութեան ուսումնասիրութեամբ, այն ժամանակ վիճելի դարձած խնդիրը կվերջանայ, և քրիստոնէական գրականութիւնը իր առաջուայ պատուաւոր տեղը կստանայ։

Բոլոր եկեղեցիներում թէև հրատարակուած են եկեղեցու հայրերի գրուածքները, որոնք յարգանքի արժանի են, բայց պէտք է խոստովանել, որ այդ գրուածները շատ քիչ յայտնի են մինչև անգամ լուսաւորեալ քրիստոնեաներին և աստուածաբաններին։ Այդպիսի տգիտութեան համար նոցա աւելի պիտի նախատել քան թէ հասարակ գիտնականներին, որովհետև նոցա սուրբ պարտականութիւնն է օգտուել ամենամաքուր և աւետարանական հոգւով գրուած աղբիւրներից աստուածային բանը բացատրելիս։

Առաջին երեք դարու քրիստոնէական գրականութիւնն ամենալաւ ապացոյց է այն բանին, որ մտաւոր զարգացումը համապատասխանում էր եկեղեցու արտաքին զարգացման, բարոյականութիւնն ևս դրա համեմատ աճում էր։ Քրիստոնեայ փիլիսոփաները, ինչպէս են՝ Յուստինոս, Կղեմէս Աղէքսանդրացի, Օրիգինէս և այլք նման չէին հեթանոս փիլիսոփաներին, նոքա հիմնական սկզբունքներով մարդիկ էին, որոնք կարծում էին, թէ յառաջադիմութիւնը ճշմարտութիւնն ընդարձակօրէն հասկանալու և նրան կեանքի գործադրութեան մէջ է։ Որպէս զի քրիստոնեայ և հեթանոս փիլիսոփաների մէջ եղած տարբերութիւնը լաւ իմացուի, հարկաւոր է Պղատոնին և Պորփիւրին համեմատել Կղեմէսի և Օրիգինէսի հետ, և ո՞վ չի համոզուիլ վերջիններիս առաջիններից գերազանցութեան մէջ։ Այդ արդէն մի մութ դպրոց չէ առանց մի որ և է բարոյական ազդեցութեան, այլ դա է մի գործնական դպրոց, որ յարգում է փիլիսոփայութիւնն, նրա բարերար ազդեցութեան համար՝ մարդկան յառաջադիմութեան վերայ ճշմարտութեան մէջ, իսկ հասարակութիւնը՝ բարոյ յաղթանակների մէջ։

Հաղիւ թէ քրիստոնեաների թիւն աւելացել էր, որ նոցա մէջ երևում են մի շարք գիտնական փիլիսոփաներ, որոնք ընդ միշտ եկեղեցու փառքն են կազմում։ ուստի և դոցա մտաւոր արդիւնքների ուսումնասիրութիւնն ամեն մի ճշմարիտ քրիստոնեայի պարտքն է, և դոցա միջոցով է, որ քրիստոնէական կրօնի բարոյականութեան, եկեղեցու կազմակերպութեան և հրահանգների մասին գաղափար է կազմում։

Քրիստոնէութիւնը սկզբում երևևեցաւ, ոչ թէ հաւատոյ վարդապետութեան որպէս մի նախագիծ, ոչ թէ մի այնպիսի սիստեմի ձևով, որ պահանջում է կատարելագործութիւն և որի լիովին զարգացումն եղել է միայն հետևեալ դարերում, այլ ընդհակառակն, նա մեզ ներկայանում է

որպէս մի դրական և պարզ իրողութիւն, որպէս հաստատութիւն բոլորովին կազմակերպուած, որպէս հաւատոյ վարդապետութիւն բոլորովին յայտնի։ Այսպէս է քրիստոնէութիւնը ներկայացրած և բացատրուած առաքելական գրուածների մէջ, և այդպէս էին հասկանում հաւատոյ վարդապետութիւնը նոցա անմիջական աշակերտները։

Առաքեալներն այն էին քարոզում և գրում, ինչ որ Աստուծուց որպէս առհաւատչեայ ստացել էին, իսկ նոցա առաջին աշակերտներն իրանց քարոզութեան մէջ մատնացոյց էին անում առաքելական վարդապետութեան վերայ, և նոյնպէս էին անում նոցա յաջորդները բոլոր եկեղեցիներում։ Այդպէս հաստատուեցաւ կանոն եկեղեցու համար՝ որ յայտնութեանց հաւատոյ վարդապետութեան առհաւատչեային միայն այն է պատկանում՝ ինչ որ առաքեալները և նոցա առաջին աշակերտները իրանց հաստատած եկեղեցիների մէջ քարոզել են, և նոյնը սրբութեամբ պահպանուած էր բոլոր եկեղեցիների մէջ։

Երկրորդ դարու վերջն՝ Երանոս այդ կանոնի վերայ մատնացոյց է անում, որպէս ճշմարիտ հաւատոյ չափի վերայ։ Նրան հետևեցին յաջորդ մատենագիրներն, ինչպէս, Կղեմէս Աղէքսանդրացի, Տերտուղիանոս, Օրիգինէս, իսկ սոցա օրինակին հետևեցին միւս ուղիղ վարդապետութեան հետևող մատենագիրները։ Առաջին երեք դարու ընթացքում չէին մերժում փիլիսոփայական խորհրդածութիւններ, ինչպէս որ երևում է Թիւոփիլոս Անտիոքացու, Յուստինոս Նահատակի և Աթենագորասի երկերից, բայց երբ պէտք եղաւ որոշել քրիստոնէական ճշմարիտ դաւանանքը հերետիկոսներինը հերքելու համար, մատնացոյց էին անում նոցա վերայ, որոնց միջոցով առաքելական վարդապետութիւնը հասել էր մինչև վէճի ծագումը։

Մասնաւոր եկեղեցիներին ուղարկուած Ս. Գրքերը դեռ ևս բոլորին յայտնի չէին։ զանազան երկրների քրիստոնեաների մէջ եղած հաղորդակցութիւնը մշտական չէր և բոլոր առաքելական գրուածների վաւերականութեան մէջ այն աստիճանի համոզուած չէին, որ բոլորը միասին միացնէին և ընդհանուրից ընդունուէին հաւասարապէս։

Այսպէս եկեղեցին օգտուում էր ոչ թէ բացառապէս գրաւոր վարդապետութիւնից՝ այլ և բերանացի աւանդած վարդապետութիւնից, որ ամեն ուրեք միակերպ էր աւանդուում և նոյնութեամբ պահպանուում։

Այս մեծ եղելութիւնն առանձին ուշադրութեան արժանի է և կարող է պատասխան լինել այն դրութեանց, որոնց հետևումեն ներկայումս մի քանի քրիստոնեայ համայնքներ. սոքա իրանց դաւանանքն որոշելու համար հիմնուումեն միայն առաքելական գրուածների վերայ և աւանդութիւնը մերժում։

Նոցա բռնած այսպիսի ընթացքը բոլորովին տարբերուում է առաջին երեք

դարու հետևած ուղղութեան վարդապետական մասն որոշելու նկատմամբ։ Այն մոռացեալ ժամանակի արժանահաւատ աղբիւրների համեմատ կարելի է որոշել հաւատոյ վարդապետութիւնը, որ այն ժամանակ ամեն տեղ հաւասարապէս ընդունուած էր, հետևեալ կերպով՝

Աստուած ըստ էութեան մի է և երեք՝ ըստ անձնաւորութեան։ Դա է Արարիչ ամեն գոյութեանց, որոնցով կազմուած է աշխարհը։

Աստուածային անձն, Որդին կամ Բանն մարդկային մարմին հոգի և միտ առնելով և բնաւ իր աստուածութիւնը չկորցնելով, է մի աստուածային անձն, Յիսուս Քրիստոս անուանեալը։

Այս Քրիստոս մեռաւ անկեալ աշխարհը գնելու համար և նրան վերածնեց խաչի մահուամբ։ Նա աշխարհի մէջ ապրեց, վարդապետեց, չարչարուեցաւ, մեռաւ, յարութիւն առաւ, համբարձաւ և Հօր աջ կողմը նըստաւ մարդկութեան փրկութեան և կեանքի համար։

Աստուածային Ս. հոգին կենդանացնում է եկեղեցին՝ այսինքն Փրկչի հաստատածը։

Այս Եկեղեցին մի է և ոչ մի յարաբերութիւն չունի նոցա հետ, որոնք Նրան չեն պատկանում։ Նա սուրբ է ըստ իւր վարդապետութեան, ընդհանրական է, այսինքն նշանակուած է տիեզերական և անընդհատ քարոզութեան, և ոչ թէ սահմանափակ և ժամանակաւոր քարոզի համար Մովսիսականութեան նման. Նա առաքելական է և պէտք է որ ընդ միշտ մնայ առաքեալների վերայ հաստատուած ինչպէս անշարժ սիւների վերայ. Նա հաղորդում է հոգևոր կեանքը աստուածային խորհրդների միջոցով մինչև վերջին դատաստան ու յարութիւն, երբ ամբողջ մարդկութեան վիճակը պիտի որոշուի։

Ահա թէ ինչպիսի առաքելական վարդապետութիւն ենք գտնում առաջին երեք դարու եկեղեցու վարդապետների գրուածների մէջ։ Ահա դաբա են ամբողջ սկզբնական եկեղեցու վարդապետութեան հիմունքներն, որոնք առաքեալների հաղորդածի համեմատ, բղխում են արևելեան և արևմտեան բոլոր մատենագիրներից՝ սկսած Կղեմէս Հռոմայեցուց մինչև Նիկիոյ տիեզերական ժողովը, որ առաջին անգամ ընդհանուր հաւատամք հրատարակեց։

Տիեզերական հաւատամքը մի նորամուտ բան չէր և ոչ էլ հաւատոյ նոր կանոն է, այլ դրանից առաջ գործ էր ածում մինչև անգամ նոյն բառերով և ասացուածներով շատ մասնաւոր եկեղեցիներում։ մենք այդ գըտնում ենք երկրորդ և երրորդ դարու շատ մատենագիրների մէջ։ Իսկ առաջին տիեզերական ժողովները նրան տիեզերական կամ ընդհանրական բնաւորութիւն տուին։

Հատ իզուր են աշխատում կիսաքրիստոնեայ մատենագիրները սուտեր գցելու այն սկզբնական իրողութեան վերայ, թէ առաքելական գրուածների կանոնն ընդունուելուց առաջ գոյութիւն է ունեցել մի լիակատար հաւատոյ վարդապետութիւն, այս իրողութիւնն այնքան պարզ է, որ չէ կարելի նրա մասին լրջօրէն վիճել։

*

(Շարունակելի)